ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄԸ ԽՈՍՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԵՐԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՏԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հովյան Գ. Ռ.

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու

Մալխասյան Ա. Հ.

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի մագիստրոս

Հանգուցային բառեր և արտահայտություններ. ԽԸԹ, խոսքի ընդհանուր թերզարգացման 4-րդ մակարդակ, լոգոպեդական աշխատանքի առանձնահատկություններ, քերականական օրինաչափությունների գործնական ընդհանրացում:

Երեխաների խոսքի զարգացումը միշտ էլ ցանկացած հասարակությունում արդիական խնդիր է հանդիսանում: Տարիքային առաջատար գործունեության փոփոխության գործընթացում թե ծնողների և թե հատուկ մասնագետների կողմից կարևորվում է երեխայի խոսքային կարողությունների և հաղորդակցման հմտությունների զարգացումը, ինչը դպրոցական ուսուցման կայացման կարևորագույն նախապայմանն է:

Որպես կանոն, առաջին դասարան ընդունվող երեխաները կարողանում են հաշվել, ոմանք՝ կարդալ, և թվում է, թե նրանք ամբողջությամբ պատրաստ են դպրոցական ուսուցմանը: Սակայն առաջին դասարանցիների մի մասը, բախվելով մշտական մտավոր ծանրաբեռնվածությանը, ունենում է մաթեմատիկական խնդիրների լուծման և բացատրության, պատճառահետևանքային կապերի հաստատման, կանոնների և հասկացությունների ձևակերպման և դրանց իմաստավորման դժվարություններ: Խնդրո առարկայի պատճառներից է երեխաների բառատրամաբանական մտածողության անբավարար զարգացումը, որը սկսում է ձևավորվել ավագ նախադպրոցական հասակում: Այն ենթադրում է բառերով օպերացիաներ կատարելու, դատողության տրամաբանությունը հասկանալու կարողությունների զարգացում:

Մայրենի լեզվի ուսուցումը տարրական դասարաններում երեք հիմնական նպատակ է հետապնդում՝ խոսելու կարողության զարգացում, մայրենի լեզվի տիրապետում և քերականական հիմնական օրենքների կամ, այլ կերպ ասած՝ այդ լեզվի տրամաբանական համակարգի յուրացում:

Խոսելով տարրական դասընթա-

ցում մայրենի լեզվի քերականության ու կենդանի լեզվի ուսուցման ուղղությամբ տարվող աշխատանքների տեղի, դերի ու համամասնության մասին՝ Ստ. Պալասանյանը գտնում էր, որ հենց սկզբից ևեթ դրանք միաժամանակ տարվել չեն կարող, կենդանի լեզվի ուսուցումն անպայման պետք է նախորդի քերականության ուսուցմանը, որպեսզի անհրաժեշտ լեզվական հիմք ստեղծի նրա ըմբռնման համար [1]: Քերականական օրինաչափությունների զարգացման միջոցները հնարավորություն են ստեղծում աշակերտի մայրենի լեզվի և մտածողության զարգացմանը, բառապաշարի հարստացմանը, ինչի շնորհիվ նրանք սովորում են խոսել կանոնավոր ու վարժ:

Մասնագիտական գրականության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երեխան քերականական կառույցը յուրացնում է ինքնուրույն՝ նմանակման ճանապարհով, ապա նա արդեն երեք տարեկանում գործածում է այնպիսի քերականական կատեգորիաներ, ինչպիսիք են՝ դեմքը, թիվը, ժամանակը, գործածում է պարզ և բարդ նախադասություններ: Նկատելի է, որ քերականական սխալների թիվը զգալի է դառնում է հինգ տարեկանում, երբ երեխան սկսում է գործածել ընդարձակ նախադասություններ, մեծանում է ակտիվ բառապաշարի ծավալը, ընդարձակվում է շփման ոլորտը: Ակնհայտ է, որ միայն յոթ տարեկանում կարելի է խոսել լեզվի քերականական կողմի ամբողջական յուրացման մասին: Արդեն տարրական դասարաններում ուսումնական խնդիր է քերականական հիմնական կանոնների և օրենքների գիտակցված յուրացման գործընթացը [2]:

Մեր կողմից իրականացրած հետազոտությունները ցույց տվեցին, որ դեռ ուսուցման ընթացքում խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների խոսքում առկա են քերականական կառուցման սխալներ: Մի խումբ երեխաների առավել բնորոշ սխալներն են՝ հոլովային ձևերի շփոթումները, հոգնակի թվի գործածման սխալները: Ակտիվ խոսքում ճիշտ են գործածվում միայն պարզ և լավ մշակված կապական բառերը: Մյուս խմբի երեխաները թույլ են տալիս յուրահատուկ սխալներ՝ բայերի և գոյականների, ինչպես նաև՝ թվականների և գոյականների համաձայնեցման մեջ: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս նաև, որ խոսքի ընդհանուր թերզարգացման չորրորդ մակարդակ ունեցող երեխաները դժվարանում են փոփոխել բառերի ձևերը՝ կախված թվի, դեմքի, ժամանակային փոփոխություններից, ինչպես նաև դժվարանում են խոսել իրենց կողմից կատարված գործողությունների վերաբերյալ:

Խոսքի ընդհանուր թերզարգացման դեպքում, ի տարբերություն պասիվ և ակտիվ բառապաշարի տիրապետման առանձնահատկությունների, խոսքի քերականական կողմի ձևավորումը տեղի է ունենում մեծ դժվարություններով: Վերջինս բացատրվում է լեզվի քերականական համակարգի ձևավորման լեզվական բազմաթիվ կանոնների ուսուցման առանձնահատկություններով, քանի որ քերականական նշանակությունն-

ները միշտ ավելի վերացական հասկացություններ են:

Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող սովորողների խոսքի քերականական կողմի խանգարումները պայմանավորված են ձևաբանական և շարահյուսական ընդհանրացումների թերզարգացմամբ, լեզվական այն միավորների զարգացման խնդիրներով, որոնց ձևավորման գործընթացում տեղի է ունենում քերականական կառուցումը, որոշակի լեզվական միավորների ընտրությունը և դրանց շարահյուսական կառուցվածքի միավորման կայացումը: [4]:

Շատ հետազոտողներ իրենց աշխատանքներում (Ն. Ս. Ժուկովայի (1990), Լ. Ֆ. Սպիրովայի (1980), Ե. Ֆ. Սոբոտովիչի (2003), Տ. Բ. Ֆիլիչևայի (1999), Ս. Ն. Շախովսկայայի (2003) և այլոց) առանձնացնում են բառերի համադրման սխալներ, որոնք խոսքի ընդհանուր թերզարգացմանը բնորոշ արտահայտություններ են՝

1. գոյականների սեռային, թվային, հոլովային վերջավորությունների սխալ գործածում,
2. քանակական թվականների հոլովային և սեռային վերջավորությունների սխալ գործածում,
3. գոյականի, դերանունների և բայերիի սխալ համաձայնեցում,
4. անցյալ ժամանակում բայերի սեռային և թվային վերջավորությունների սխալ գործածում:

Ամփոփելով, հարկ ենք համարում շեշտադրել, որ խոսքի ընդհանուր թերզարգացման չորրորդ մակարդակ ունեցող երեխաները կարող են կրթություն ստանալ ինչպես հանրակրթական, այնպես էլ՝ ներառական և հատուկ կրթություն իրականացնող դպրոցներում: Սակայն պետք է նշենք, որ վերոնշյալ խոսքային խանգարման դեպքում դիտվում են մի շարք դրսևորումներ, առանձնահատկություններ, որոնք կարող են նաև հանդես գալ այլ՝ ավելի թեթև խոսքային խանգարումների ժամանակ, ինչի պատճառով էլ ոչ միշտ են այս երեխաները բացահայտվում ժամանակին և ճիշտ գնահատում անցնում: Ինչպես նշում է Լ. Ա. Բրյուխովսկին (2008), այսօր դպրոցներում լոգոպեդական գործունեության համար առանձնահատուկ դժվարություն է ներկայացնում խոսքային խանգարումներ ունեցող կրտսեր դպրոցական աշակերտների նախադասությունների կառույցների հասկացման և գործածման ձևավորումը [3]: Այս առումով, մենք մեր կողմից իրականացված հետոզոտության շրջանակներում կարևորել ենք խոսքի ընդհանուր թերզարգացման չորրորդ մակարդակ ունեցող կրտսեր դպրոցահասակ երեխաների քերականական օրինաչափությունների գործնական ընդհանրացումը:

Մեր կողմից իրականացված հետազոտության նպատակն էր խոսքի ընդհանուր թերզարգացման 4-րդ մակարդակ ունեցող սովորողների խոսքի զարգացման արդյունավետ միջոցների ընտրությունը՝ քերականական օրինաչափությունների գործնական ընդհանրացման ճանապարհով: Կարծում ենք, որ, որ խոսքի ընդհանուր թերզարգացման 4-րդ մակարդակ ունեցող սովորողների հետ իրականացվող լոգոպեդական աշխատանքներն առավել արդյունավետ են, եթե իրականացվում են

քերականական օրինաչափությունների գործնական ընդհանրացման ճանապարհով: Հետազոտության իրականացման համար մեր խողմից իրականացվել է լոգոպեդական գրականության ուսումնասիրում և վերլուծություն, հոգեբանամանկավարժական և խոսքային հետազոտման մեթոդների ուսումնասիրություն, խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող սովորողների մանկավարժական փաստաթղթերի ուսումնասիրում, քերականական օրինաչափությունների գործնական ընդհանրացման ձևավորման գործընթացում մեթոդական համապատասխան միջոցների կիրառում, հետազոտության ընթացքում ստացված արդյունքներն ընդհանրացնող մեթոդներ:

Ապացուցված է, որ ամրապնդելով բառերի փոփոխություններն ըստ թվի, հոլովների, դեմքի, երեխաները սովորում են ճիշտ գործածել յուրացված նյութը տարբեր խոսքային կոնտեքստներում և իրավիճակներում: Իսկ դա, իր հերթին, պահանջում է լավ կազմակերպված խոսքային փորձ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խոսքի ընդհանուր թերզարգացման չորրորդ մակարդակ ունեցող երեխաները դժվարանում են իրենց խոսքում պահպանել տրամաբանական ճիշտ հաջորդականությունը և նախադասության անդամների ճիշտ հերթագայությունը:

Մեր կողմից իրականացված հետազոտական աշխատանքի երկրորդ փուլում փորձարարական խմբի երեխաներին առաջարկվել է Ն. Է. Տերեմկովայի կողմից առաջարկած մեթոդիկան՝ որպես խոսքի ընդհանուր թերզարգացման շտկման գործընթացում խոսքի քերականական օրինաչափությունների գործնական ընդհանրացման միջոց: Արդյունքում, արձանագրվել է լոգոպեդական աշխատանքների իրականացման ավելի բարձր արդյունավետություն և քերականական օրինաչափությունների ձևավորման ավելի բարձր ցուցանիշներ: Նախքան լոգոպեդական աշխատանքները սկսելը խոսքի ընդհանուր թերզարգացման չորրորդ մակարդակ ունեցող երեխաների խոսքի քերականական կառույցների տիրապետումը կազմում էր 40%, իսկ լոգոպեդական աշխատանքներից հետո փորձարարական խմբում՝ 70%, իսկ ստուգողական խմբում՝ 55%: Պետք է նշել, որ հետազոտության ընթացքում առաջադրված խնդիրները կարողացել ենք հանգուցալուծել՝ լոգոպեդական աշխատանքների արդյունքում ձևավորելով և ամրապնդելով այնպիսի կարողություններ և հմտություններ, ինչպիսիք են՝ բառերի ձևերի փոփոխություններն ըստ թվի, հոլովների, դեմքի, յուրացված նյութի ճիշտ գործածումը տարբեր խոսքային ենթատեքստներում և իրավիճակներում: Լոգոպեդական աշխատանքի արդյունքում երեխաները սովորեցին կազմել նախադասություններ, հարստացավ նրանց բառապաշարը, ձևավորվեց եզակի և հոգնակի թվով դրված գոյականները տարբեր հոլովներում ճիշտ գործածելու կարողությունը, կապեր և կապական բառեր կիրառելու հմտությունը:

Այսպիսով, հետազոտությունները, որոնք ուղղված էին քերա-

կանական օրինաչափությունների գործնական ընդհանրացմանը խոսքի ընդհանուր թերզարգացման շտկման գործընթացում, ցույց տվեցին, որ քերականական կառույցների լիարժեք յուրացումը հնարավոր է դառնում միայն քերականական օրինաչափությունների գործնական ընդհանրացման ճանապարհով, ինչն էլ հնարավորություն է տալիս խթանել կապակցված խոսքի զարգացմանը:

Այսպիսով, հաշվի առնելով մեր կողմից անցկացված աշխատանքների ծավալը, տևողությունը, հետազոտման մեթոդների կիրառումը, փաստացի նյութի մշակումը, տեսական և գործնական դրույթների հավաստիությունը և հիմնավորումը, ինչպես նաև հետազոտության արդյունքների քննարկումները, կարող են փաստել, որ խոսքի քերականական կառույցի ձևավորման գլխավոր մեխանիզմը երեխայի կողմից մայրենի լեզվի օրինաչափություններին տիրապետելն է, ինչը թույլ է տալիս միտքը փոխակերպել խոսքային գործողության: Պետք է նշել նաև, որ խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների խոսքի քերականական կառույցի տիրապետման յուրահատկությունը դրսևորվում է յուրացման ավելի դանդաղ տեմպի, լեզվի ձևաբանական և շարահյուսական համակարգերի զարգացման աններդաշնակության, խոսքի զարգացման ընդհանուր պատկերի աղավաղման մեջ, քանի որ խոսքի ընդհանուր թերզարգացման չորրորդ մակարդակ ունեցող երեխաներին առավել բնորոշ են խոսքային յուրահատկություններ՝ հոլովային ձևերի շփոթումներ, հոգնակի թվի գործածման սխալներ: Այդ պատճառով էլ մենք կարևորում ենք խոսքի ընդհանուր թերզարգացման շտկման փուլայնությունը, որի կայացման կարևոր նախապայման է քերականական օրինաչափությունների գործնական ընդհանրացումը:

Այսպիսով, մեր կողմից իրականացված հետազոտությունները թույլ են տալիս շեշտադրել այն կարևոր հանգամանքը, որ խոսքի ընդհանուր թերզարգացման 4-րդ մակարդակ ունեցող սովորողների հետ իրականացվող լոգոպեդական աշխատանքները առավել արդյունավետ հնարավոր է իրականացնել քերականական օրինաչափությունների գործնական ընդհանրացման ճանապարհով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Տեր- Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա: Տարրական դասարաններ, Ե.: Լույս, 1980- 564 էջ

2. Арушанова А.Г. Формирование грамматического строя речи. - М., 2005.- 296 с.

3. Брюховских Л. А. Исследование нарушений понимания сложных лексико- грамматических структур языка у младших школьников с дизартрией: учебное пособие; КГПУ им. В. П. Астафьева.- Красноярск, 2008.

4. Нищева Н.В. Программа коррекционно-развивающей работы в логопедической группе детского сада для детей с общим недоразвитием речи (с 4 до 7 лет).- СПб.: ДЕТСТВО-ПРЕСС, 2006.-352 с.

5. Теремкова Н.Э. Логопедические домашние задания для детей 6-8 лет с ОНР. Альбом 1 / Н.Э. Теремкова. - М.: Издательство «ГНОМ и Д», 2007. - 48 с

6. Теремкова Н.Э. Логопедические домашние задания для детей 6-8 лет с ОНР. Альбом 2 / Н.Э. Теремкова. - М.: Издательство «ГНОМ и Д», 2008. - 48 с

7. Теремкова Н.Э. Логопедические домашние задания для детей 6-8 лет с ОНР. Альбом 3 / Н.Э. Теремкова. - М.: Издательство «ГНОМ и Д», 2008. - 48 с

8. Теремкова Н.Э. Логопедические домашние задания для детей 6-8 лет с ОНР. Альбом 4 / Н.Э. Теремкова. - М.: Издательство «ГНОМ и Д», 2008. - 48 с

9. Тосуниди О. М. Планирование логопедической работы с учащимися 1-2 классов, имеющими Нерезко выраженное общее недоразвитие речи- 4 уровня\\ Школьный логопед № 6, 2007.

10. Филичева Т.Б. Четвертый уровень недоразвития речи. - Логопедия. Методическое наследие: Пособие для логопедов и студ. дефектол. фак. пед. вузов/Под ред. Л.С. Волковой. – М.: Гуманит. изд. центр ВЛАДОС, 2003. – С. 181-186.

11. Фуреева Е. П., Штеле Е. А. Особенности формирования понимания логико- грамматических конструкций у младших школьников с ОНР \\ Школьный логопед № 5, 2007.

РЕЗЮМЕ

ПРАКТИЧЕСКОЕ ОБОБЩЕНИЕ ГРАММАТИЧЕСКИХ ЗАКОНОМЕРНОСТЕЙ В ПРОЦЕССЕ КОРРЕКЦИИ ОНР

Овян Г.Р.

Доцент кафедры логопедии и восстановительной терапии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, кандидат педагогических наук

Малхасян. А. Г.

Магистрант кафедры логопедии и восстановительной терапии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна

В статье представлены особенности коррекционной логопедической работы, которая проводится с детьми, имеющими 4–й уровень ОНР, путем практических обобщений грамматических закономерностей. Основой усвоения грамматического строя является формирование практических обобщений, развитие которых позволяет стимулировать развитие связной речи.

SUMMARY

PRACTICAL GENERALIZATION OF GRAMMATICAL REGULARITIES IN THE PROCESS OF CORRECTION OF GENERAL SPEECH DISORDER

Hovyan G.R.

ssociate professor at the Chair of the Speech and Rehabilitation therapy Khacatur Abovyan Armenian State Pedagogical University, Candidate of Pedagogical Sciences

Malkhasyan A.A.

Master degree course student of chair of the Speech and Rehabilitation therapy Khacatur Abovyan Armenian State Pedagogical University

The article presents the features of speech therapy remedial work carried out with children with 4th level of speech development through practical general grammatical patterns. The basis of mastering the grammatical structure is the formation of practical generalization, which stimulates the development of coherent speech.